



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

20.06.2014 թ. N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգարժա՛ն բուժաշխատողներ

Ձերն բարեմաղթանքներով շնորհավորում եմ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ՝ ցանկանալով Ձեզ անսահման բարիք և մասնագիտական նորանոր ձեռքբերումներ:

Հարկ է նշել, որ Ձեր պատասխանատու և մարդասիրական գործունեությունը դարեր շարունակ համարվել ու համարվում է ամենապահանջվածը և մշտապես արժանացել է ամենայն հարգանքի:

Համոզված եմ, որ յուրաքանչյուրդ քաջ գիտակցում եք առողջապահության ոլորտում իրականացվող շարունակական բարեփոխումների, ինչպես նաև համակարգի նկատմամբ պետական հոգածության կարևորությունները և այդ ամենով հանդերձ պետք է անել ամեն ինչ, որպեսզի մեր հասարակությունը լիարժեքորեն ընկալի հիշյալ գործընթացների բոլոր գերակայություններն ու նկատելի դրսևորումները:

Դարձյալ շնորհավորում եմ ու մաղթում, որ Ձեր նշանակալի և առանցքային առաքելությանը մաս կազմեն միմիայն հաջողությունները:

Բարին ընդ Ձեզ:

Հարգանքներով

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ